

պէս հիմնուած են հացի և գինեւոյ վրայ՝ Տէտէներու կատարած աղօթքներով, որ կը բաժնուին ներկաներուն յարգանքով: Կը պնդեն որ անոնք եպիսկոպոսներ ունին, և մի ամբողջ գաղտնի նուիրապետական դասակարգ, որ կարծել կուտայ թէ անոնք կը սերին հին քրիստոնեաներէ՝ չառ յետոյ վերածուած գաղտնի համայնքի, երեութապէս իսլամութիւն խոստովանելով. կը կարծեն որ անոնք եկած են Պարսկաստանէն կամ անոր սահմանագլուխներէն: Գրգըլ-պաշներու թիւն է 182.580: Տիգրանակերտի մէջ ևս հազար մը: Ամբողջը 183,580:

Գրգըլ-պաշներու այս թուականն չափազանց տարբերութիւնը առաջ կուգայ զանոնք թիւրքերու հետ խառնելու և զատելու խնդրէն իբրև միւսիւլման:

Հետեապէս ազատ և ճիշտ վիճակագրութիւն մը միայն կրնայ ստուգել անոնց թիւը՝ դարձեալ իբր հաւանական միջին թիւ՝ առնելու է անգլ. Հիւպատոս Թէյլլըրի ցոյց տուած քանակը՝ որ է (110,000) հարիւր տասը հազար:

Ք Ի Ի Ր Դ Ց Ե Ղ Ա Պ Ե Տ Ը

Յեղապետութիւնը մեծ մասամբ ժառանգական է Բիւրդերու մէջ: Ժառանգը ծնուելէն սկսեալ, իր շրջապատը անոր վրայ կը նայի իբր ապագայ ցեղապետի: Կրթութիւնը անհրաժեշտ պայման չէ. քիւրդ լեզուն զրական կեանք չունի գրելիք. իսկ ցեղապետական գործերու համար՝ նայելով տեղին ու պարագաներուն՝ կը գործածեն պարսկերէնը, թիւրքերէնը կամ արաբերէնը:

Բիւրդերու մէջ կրթութեան մուտք չը գործելու մէկ մեծ պատճառն այ այն նախապաշարմունքն է, թէ կը ձուլուին այն ազգին մէջ՝ որու կրթութիւնն որ ստանան՝ որովհետև համակրօնութիւնը ազոր մեծ դիւրութիւն ընծայելու առիթ մ'է:

Գրական պէտքերը կը հոգան վարձուած գրագէտները, թիւրք կամ պարսիկ: